



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Ա. ԲԱԲԱԶԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 395-Ա որոշումը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Արմենուհի Բարսեղյանին* տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ տասը աշխատանքային օր, 2019 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 14-ը ներառյալ:

2. *Արմենուհի Բարսեղյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ *Լյուդվիգ Հարությունյանի* վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ *Լյուդվիգ Հարությունյանին* և «Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Ժորժ Քոչարյանցին* ապահովել «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի (*ընտրանական բժիշկ՝ Ժորժ Քոչարյանց*) կողմից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2019 թվականի սեպտեմբերի 24
ք. Հրազդան
N 175-Ա

Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ